ՃԲ.

Եղիա վրդ. երեք ամ կացեալ զ30 անձինս թաղեալ, հայր յակոբն երկու ամ զ9 անձինս թաղեալ, իսկ ես 13 ամիսն զ41 թաղեալ։ Թող նաև զերկիւղն թշնամւոյն, որ մինչ ցարդ կրեմք, զի ի մօտակայ ժամանակիս մինչև ի վարուշն եկին տաճիկք և զամենայն գիւղօրէս տիրեալ և խարաճ առնուն։ Եւ գրեալ են աստ մարշալին եթէ դուք ևս ելեալ պահանջիցէք զհարկս ի գիւղից, գիտասջիք, որ կրկին հատուցանելոց էք. նաև զամք ի ներքոյ պէլրղատու. զի գիւղօրէքն բոլոր մեզ ոէէ են։ Նաև թանկութիւն քաղաքիս նեղէ զմեզ, զի մի ձուն 4 սօլտի է, և զայլսն թողում ճառել։ Նաև ժանտամահն սարսափեցոյց զմեզ. յայժմ սակաւ ինչ թուլացեալ։ (Հ. Միք. վ. Սեր. առ Մխիթար, յամիսն 1738 դեկ.ի 13, ի պէլրղատ)։

Կ.

Զթշուառական կացութենէ քաղաքիս, մի ըստ միոջէ ոչ կարեմ գրել, թէ զմեռանողաց, թէ զթանկութենէ, թէ զկաշառակուր իշուանաց[1] և կառավարչաց և զանփութութենէ նոցին, թշնամիք խաչին ի մերձակայ սահմանս սորին, և խաղ խաղան, զամենայն գիւղօրէս սոցին հարկատու ինքեանց արարին. միանգամ աստի իբրու ԲՌ գատանայ և հեծելազօր գնացին յուրեք, ուր գոյր մի փաշայ զօրօք, յանկարծ կոխել զնոսա, նոքա իմացեալ, սոքա զոչինչ արարեալ յետս դարձին։ Ցամենայն աւուր պէսպէս զրոյց ահարկական ելանէ ի կողմանէ անօրինաց։ Եւ ի տագնապի եմք։ Աստ ասեն թէ զփեսայն կայսեր ուղարկեալ են այդր յերկիր թօսկանայ առ ժառանգն, բայց տէր զալուստի ազգն դէմ կայ և ոչ կամի. այլ զմարտ տալ կամի։ (Հ. Միքայէլ Սեբաստացի առ Մխիթար, յամիսն 1739 Յունվարի 24, ի Պէլրղատ)։

Կա.

Մեծ պատրաստութեամբ տաճիկքն, թէ ի սեաւ ծովն և թէ ի ճերմակ ծովն, այսինքն թէ ի ցամաքէն և թէ ի ծովէն ելեալ գնացին ապրիլի ամսոյն։ Հին վէզիրն քշեցին և զնոր վէզիր յղեցին ի պատերազմ ի վերայ արծուին, սակայն ասեն թէ թարց երկբայութեան խաղաղութիւն լինելոց է յայսմ ամի.... ժողովուրդքն զբազումս նեղութիւնս և զվնասս կրեալ են և կրեն միշտ ի ձեռս զինուորաց և լէվէնտից.... յապրիլի 4, ի սապահ նամազին ի յիզմիր մէկ մեծ գետնաշարժութիւն եղեալ է, ի Ֆռէն մահալլէսին բազում տունք փլեցեալք են, և ի ներքոյ նոցին բազում մարդիք մնացեալք են, և յայլ տեղիս ևս բազումք. մէկ ճամի բոլորովիմբ փլեցեալ է, և չորս և հինգ մինարէ անկեալ է։ (Հ. Պետրոս առ Մխիթար, յամիսն 1739 Մայիսի 5. [Կ. Պոլիս])։

Կբ.

Աժմն ոչ եմ ի քաղաքն Վէննայ, այլ լոքսնբուրկ, ուր սովոր է կայսրն ամենայն ամ գնալ անդ և զբօսնուլ զորսորդութիւն, և պատճառ գնալոյն իմոյ է, զոր կոմսն քինիքսէք բերեալ է ընդ իւր երկու տաճիկք, որոց ուսուցանելոյ զքրիստոնէական վարդապետութիւն ընդ իւր էառ զիս.... Եւ վասն պատերազմին այս ամիս բազում պատրաստութեամբ գնացին, և ամենայն ելեքտօրներն ըստ պարտաւորութեան զօրք ետուն. և զօրագլուխն է Ջէնէրալ Վալիսն[2] որ է յոյժ

1. Անշուշտ իշխան հասկնալու է։
2. Սպարապետ է կայսերական բանակին։